ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2023 թվականի թիվ 222- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿԵԼՈՒ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի թիվ 32 նիստի արձանագրությունը՝

ո ր ո շ ում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում անասնապահությամբ զբաղվող գյուղացիներին՝ հատկապես հեռավոր գյուղերի, փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագրերի իրագործման ձևերի ու հնարավորությունների մասին իրազեկելու և աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ մեկամսյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետի պահանջները և ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

28.08.2023

X

2023թ.օգոստոսի 28
ք.Իջևան

Հավելված»
ՀՀ Տավուշի մարզպետի
28 օգոստոսի 2023թ. թիվ 222 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿԵԼՈՒ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Խմբի ղեկավար՝

Յու. Բազինյան - ՀՀ Տավուշի մարզպետի օգնական,

Անդամներ՝

Վ. Սուքոյան - Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ,

Գ. Փայտյան - Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

Ա. Ամիրխանյան - Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

Վ. Օրդյան - Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ,

Տվյալ բնակավայրի վարչական ղեկավար և համայնքի գյուղատնտեսության ոլորտի մասնագետ:

Գլխավոր քարտուղար՝ Ա.Գևորգյան

28.08.2023

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241